

Ս. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. Մ. ՄԻՆԱՅՅԱՆ

ՌԱԴԻՈԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1927—1967 թթ.)

Գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներում ատոմային էներգիայի և ռադիոակտիվ իզոտոպների լայն կիրառումը, միջուկային փորձարկումները և դրա հետ կապված մարդկանց ճառագայթահարման վտանգի մեծացումը անհրաժեշտություն է առաջացնում բազմակողմանիորեն ուսումնասիրել իոնացնող ճառագայթների կենսաբանական ազդեցությունը մարդկանց, կենդանիների և բույսերի վրա:

Առաջադրված հարցի ակտուալությունը գրավել է հետազոտողների լայն շրջանի՝ այդ թվում նաև հայ գիտնականների ուշադրությունը:

Հայաստանում ռադիոկենսաբանության հարցերով սկսել են դրավել 1927 թվականից: Առաջին հետազոտությունները կատարվել են 1-ին կլինիկական հիվանդանոցի ունտգենո-ռադիոլոգիական բաժանմունքի և Երևանի բժշկական ինստիտուտի բազայի վրա (դիրեկտոր Վ. Ա. Ֆանարջյան): Այս տարիներին հիմնականում ուսումնասիրվել են ունտգենյան ճառագայթների հետ պրոֆեսիոնալ շփում ունեցող անձնակազմի (ունտգենոլոգների) օրգանիզմում առաջացող փոփոխությունները:

Առաջին փորձառական քնույթի հետազոտությունները Հայաստանում կատարել է Հ. Մ. Սաղաթելյանը, որը 1940 թ. պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա՝ «Ունտգենյան ճառագայթների ազդեցությունը շների ձվիկների վրա» թեմայով:

Կատարված հետազոտություններից հեղինակը հանգել է այն եղակացության, որ ունտգենյան ճառագայթները սերմնարաննե-

րի վրա աղդում են ընտրողաբար՝ կախված բջիջների տեսակից և ելակետային ֆունկցիոնալ՝ վիճակից։ Ամենառադիոգրայունը սպերմատոզոնիումի որոշ բջիջներն են, իսկ ամենառեղիստենտը՝ Սերտոլի և Լայզերի ինտերստիցիալ բջիջները։

Ստացված արդյունքների հիման վրա հեղինակը առաջարկում է բուժման ժամանակ կիրառել կոտորակային բազմանվագ ճառագայթահարումը։

1946թ. Երևանում ստեղծվում է Հայկ. ՍՍՀ առողջապահության մինիստրության ոնտագենոլոգիայի և օնկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ, իսկ նրանում՝ ոնտագեն-ֆիզիոլոգիայի լաբորատորիա, որը սկսում է զբաղվել փորձառական օնկոլոգիայի, ոնտագենֆիզիոլոգիայի և ուսումնաբանության հարցերով։ Լաբորատորիայի աշխատակիցները Գ. Պ. Մուշելլյանի ղեկավարությամբ ուսումնասիրել են ուսումնաբանության ազգեցությունը կենդանիների վեգետատիվ կենտրոնների (թալամոս) վրա։ Պարզվել է, որ թալամոսի վրա ուսումնաբանության ազգեցությունը առաջացնում է սեղենովյան արգելակում և մաշկային մելանոֆորների կծկում։

Հետագայում ինստիտուտի բազայի վրա կազմակերպվեց փորձառական-կենսաբանության լաբորատորիա՝ Հ. Մ. Սաղաթելյանի ղեկավարությամբ (գիտական խորհրդատու Վ. Հ. Ղազարյան)։

Այս լաբորատորիայում հիմնականում զբաղվել են բույսերի վրա ոնտագենյան ճառագայթների ազգեցության ուսումնասիրությամբ։

Հ. Մ. Սաղաթելյանը հետազոտել է ցորենի և տարեկանի սերմերի և ծիլերի վրա ոնտագենյան ճառագայթների ազգեցությունը։ Ընդհանրացնելով իր տվյալները, հեղինակը եղբակացնում է, որ ցորենի և տարեկանի բերքատվությունը բարձրացնող և կենսագործունեությունը խթանող դոզաները չոր սերմերի համար հանդիսանում են 8000—11000 ոնտագեն, իսկ ծիլերինը (բողբոջներինը)՝ 350—750 ոնտագեն։ Ավելի փոքր դոզաները բույսերի վրա զբական ազդեցություն չունեն, իսկ մեծերը առաջ են բերում խորը ախտահարումներ՝ ընդհուպ մինչև վերջիններիս մահը։

Հ. Մ. Սաղաթելյանը հետազայում իր գիտական գործունեությունը նվիրում է ստամոքսա-աղիքային տրակտի հիվանդությունների ոնտագեն-ախտորոշմանը, միայն ժամանակ առ ժամանակ անդրադառնալով ուսումնաբանության հարցերին։

Մի քանի տարի անց փորձառական կենսաբանության լաբո-

ռատորիայի աշխատանքները ընդունում են լրիվ ռադիոկենսաբանական բնույթ, ուստի 1954 թ. այն փերանվանվում է ռադիոկենսաբանական լաբորատորիա: Սրանով էլ Հայաստանում ստեղծվում է առաջին փորձարարական ռադիոկենսաբանական օջախը:

Իր գոյության սկզբնական շրջանում ռադիոկենսաբանության լաբորատորիան ունեցել է սահմանափակ թվով գիտաշխատողներ (վարիչ՝ Մ. Ա. Մովսիսյան և Ա. Կ. Աղաբաբյան): Այս շրջանում գիտական հետազոտությունները հիմնականում տարվել են ճառագայթահարված կենդանիների ռեֆլեկտոր ռեակցիաների և ճառագայթային վնասվածքների ներվո-ռեֆլեկտոր մեխանիզմների ուսումնասիրության ուղղությամբ:

Հետագայում աստիճանաբար ընդլայնվել են ռադիոկենսաբանական լաբորատորիայի հաստիքային միավորները և մշակվող խնդիրների շրջանակները:

Ռադիոկենսաբանական լաբորատորիայի կոլեկտիվը՝ վերջին տասը տարիների ընթացքում բազմակողմանիորեն ուսումնասիրել է օրգանիզմի վրա իրացնող ճառագայթների և արյունաթողման համակցված ազդեցությունը:

Այս ընդհանուր պրոբլեմից ուսումնասիրվել են հետևյալ գլխավոր հարցերը. ճառագայթահարված կենդանու զգայունությունը և դիմացկունությունը արյունաթողման նկատմամբ, արյունաթողման ազդեցությունը սուր ճառագայթային հիվանդության դրացքի վրա (Մ. Ա. Մովսիսյան), իրացնող ճառագայթների և արյունաթողման համակցված ազդեցությունը տարբեր օրգան—սիստեմների վրա՝ շնչառության և շնչառական կենտրոնի ֆունկցիոնալ վիճակը (Է. Ա. Մայիլյան), մակարդիչ և հակամակարդիչ մի շարք գործոնների բնույթը (Պ. Տ. Շահբաղյան), սիրտ-անոթային համակարգության ֆունկցիան (Մ. Ա. Մովսիսյան և Լ. Ն. Մելիք-Մկրտչյան), ստամոքսի սեկրեցիան և մոտորիկան (Մ. Գ. Միքայելյան), ածխաջրատային փոխանակությունը (Լ. Խ. Բարխուտարյան), իմունոկենսաբանական ռեակտիվությունը (Ա. Գ. Մաղաքյան), սրտամկանի էներգետիկ փոխանակությունը (Դ. Ե. Հարությունյան) և այլն:

Կատարված հետազոտություններից հեղինակները եղակացնում են, որ ճառագայթային հիվանդության թույլ ընթացքի դեպքում օրգանիզմի պաշտպանական-հարմարողական ռեակցիաները և կոմպենսատոր-վերականգնող հնարավորությունները արյունաթողման նկատմամբ պահպանվում են, իսկ միջին և ծանր աստի-

ճանի ճառագայթային հիվանդության ժամանակ առաջին, երրորդ շրջան փուլերում օրգանիզմի դիմացկունությունը արյունասիտեմի կոմպենսատոր՝ հարմարողական ռեակցիաների թուղարացման և հեմոդիմիկայի վերականգնման հնարավորության փոքրացման հետևանքով:

Փոքր քանակությամբ արյունաթողումը ( $20\%-ից$  քիչ) սուր ճառագայթային հիվանդության ընթացքի վրա ունի բարերար ազդեցություն, իսկ  $30\%-ից$  բարձրը խորացնում է այն՝ ստամոքսի սեկրետոր և մոտոր-էվակուատոր ֆունկցիայի, սրտի գործունեության, արյան հիմնային ռեգերվի խորը խանգարման հետևանքով:

Կենդանի օրգանիզմների վրա իռնացնող ճառագայթների ու արյունաթողման համակցված ազդեցության պայմաններում «պոլիգլուկին» և Ս. Ա. Հակոբյանի «Արմ իՊԿ» հակաշոկային հեղուկ-ների կիրառումը հակարիտիկների ու վիտամինների հետ տալիս է որոշակի բուժիչ էֆեկտ:

Վերը թվարկած հետազոտությունները անշուշտ ունեն ոչ միայն տեսական, այլև կարեոր գործնական նշանակություն ժամանակակից բժշկության համար: 1965 թ. այս թեմայով պաշտպանվել է մեկ դոկտորական (Մ. Ա. Մովսիսյան), իսկ հետագայում թեկնածուական դիսերտացիաներ (Մ. Գ. Միքայելյան, Ա. Գ. Մաղարյան, Լ. Խ. Բարիխուդարյան):

Լաբորատորիայի աշխատակիցների կողմից հրատարակվել է ավելի քան 100 գիտական աշխատանք, այդ թվում հայերեն լեզվով մեկ ուսումնական ձեռնարկ՝ «Խառնորդիոլոգիա»:

1955 թ. Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում (վարիչ՝ Ս. Ա. Հակոբյան) ստեղծվում է ուսումնականաբանության երկրորդ կարուրագույն օջախը Հայաստանում:

Սկզբնական շրջանում ամբիոնը իր գործունեությունը կոորդինացնում է Հայկ. ՍՍՀ ԳԱ ուսումնական ուսումնական գործունեության անկանոնության և օնկոլոգիայի, Ռ. Օ. Յոլլանի անվան հեմատոլոգիայի և արյան փոխներարկման, օրթոպեդիայի և տրավմատոլոգիայի ինստիտուտների կողեկտիվների հետ:

Ամբիոնի հիմնական գիտական թեման հանդիսանում է «Օրգանիզմների ռադիոգայնությունը և նրանց ֆիզիոլոգիական ֆունկցիաների ախտահարման ու վերականգնման մեխանիզմները ճառագայթային վնասվածքների ժամանակ»:

Կենդանի օրգանիզմների վրա ուսումնական ճառագայթների

բազմակողմանի ուսումնասիրությունը ամբիոնի աշխատակիցներին հնարավորություն է տվել կենսական կարևորագույն ֆունկցիաների փոփոխություններում հայտնաբերելու հետաքրքիր փաստեր (մարսողական տրակտի սեկտոր-էքսկրեսոր գործունեությունը, մարսողական հյութի տոքսիկություն, «ճառագայթային» արյան փոխներարկման պայմաններում ներվո-հումորալ գործունների դերը մարսողական տրակտի սեկրետոր-ներծծող գործունեության մեջ, շնչառությունը կարգավորող մեխանիզմների և շնչառական կենտրոնի կողմանսամտոր հնարավորությունների ֆունկցիոնալ վիճակ, կենտրոնական ներվային սիստեմի մասնակի և լրիվ անեմիայի պայմաններում էնգի և ներվոմկանային ապարատի գրգռականություն, ֆիզիոլոգիական մի քանի ֆունկցիաների օրային և սեզոնային տատանումների բնույթ, մյութափոխանակություն և այլն):

Հեղինակների կողմից առաջին անգամ հաստատվել է, որ ճառագայթահարված օրգանիզմի ախտահարված հյուսվածքները արտազատում են կենսաբանորեն ակտիվ նյութեր ոչ միայն արյան, այլև ստամոքսահյութի մեջ, որոնք ընդունակ են շճառագայթահարված կենդանու օրգանիզմում խախտել արյունաստեղծման պրոցեսները, ինչպես նաև զարգացնել ճառագայթային հիվանդությանը բնորոշ մի քանի ախտանշաններ: Հաստատված է կապ ճառագայթային հիվանդության ինտենսիվության և ստամոքսահյութի տոքսիկության միջև: Ստացված տվյալները հնարավորություն են տվել նշված մեթոդները առաջարկել որպես սուր ճառագայթային հիվանդության ախտորոշման միջոցներ:

Նկատի ունենալով, որ մարդը և կենդանիները ճառագայթային էներգիայի ազդեցությանը կարող են ենթարկվել շրջապատող միջավայրի ամենաբազմազան պայմաններում (տարվա տարրեր եղանակներին, օրվա տարրեր ժամերին, տարրեր բարձրությունների վրա, տաք և ցուրտ կլիմայի, ցածր ու բարձր մթնոլորտային ճնշման պայմաններում, ինչպես նաև արտաքին միջավայրի վերը նշված գործունների բոլոր հնարավոր համակցությունների դեպքում), ամբիոնի աշխատակիցները ուսումնասիրել են նաև կենդանի օրգանիզմների ռադիոդգայունության փոփոխությունները միջավայրի այս պայմաններում: Նշված հարցի զուծումը, անտարակույս, կօդ-նի ճառագայթային վնասվածքների պրոֆիլակտիկայի և բուժման ուղղիությալ կազմակերպմանը՝ հաշվի առնելով նաև շրջապատող միջավայրի առանձնահատկությունները:

Այս առումով ամբիոնի աշխատակիցները ուսումնասիրել են

Հոմոյոթերմ (տաքարյուն) և պոյկիլոթերմ (սառնարյուն) կենդանիների ռադիոգալունությունը, ինչպես նաև ցածր և բարձր մթնոլորտային ճնշման պայմաններին նախօրոք հարմարված (ակլիմատիզացված) կենդանիների ռադիոգալունության փոփոխության պատկերը:

Ռադիոգալունության տատանումների հասակային առանձնահատկությունները ուսումնասիրելու համար փորձերը դրվել են սեռահասուն և ոչ սեռահասուն կենդանիների վրա:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ շրջապատող միջավայրի ցածր ջերմաստիճանը ( $2^{\circ}$ -ից ցածր) բարերարագեցություն է թողնում պոյկիլոթերմ կենդանիների ճառագալթային հիվանդության ընթացքի վրա, իսկ բացասարար՝ հոմոյոթերմ-ների վրա: Ցածր մահացություն և ճառագալթային հիվանդության համեմատաբար մեղմ ընթացք նկատվել է մինչև ճառագալթահարումը (600 ր.) և ճառագալթահարումից հետո  $5^{\circ}$ — $8^{\circ}$  պայմաններում մի քանի օր պահված մկների մոտ: Մինչև ճառագալթահարումը և նրանից հետո  $2^{\circ}$ -ից ցածր ու  $37^{\circ}$ -ից բարձր ջերմության պայմաններում պահված մկների ճառագալթային հիվանդությունը ընթացել է ծանր, բացակայել են ջերմակարգավորող սիստեմի հարմարութական ռեակցիաները:

Հաշվի առնելով Հայաստանի տեղային բարձր լեռնային յուրահատուկ աշխարհագրական պայմանները, ամբիոնի աշխատակիցները ուսումնասիրել են նաև ճառագալթահարված կենդանիների ֆիզիոլոգիական մի քանի փունկցիաները և նյութափոխանակությունը՝ ցածր մթնոլորտային ճնշման պայմաններում (Հայաստանի բարձր լեռնային շրջան Արագածում և լարորատոր պայմաններում՝ բարոկամերայում):

Թարգվել է, որ  $25$ — $30$ -օրյա ճախնական ադապտացիան ցածր մթնոլորտային ճնշման պայմաններում բարձրացնում է սեռահասուն կենդանիների ռադիոռուղիստեխնականությունը: Այս երկույթի մեխանիզմում որոշակի դերը պատկանում է շնչառական ապարատի գրգռողականության փոփոխությանը: Հաստատվել է նաև, որ հիպօքսիային հարմարված կենդանիների մոտ էքստրեմալ դրոժոնների ազդեցության պայմաններում նույնպես շարունակվում է պահպանվել մարմնի ջերմակարգավորման, արյան մորֆոլոգիական կազմի, սիրտ-անոթային սիստեմի և շնչական ապարատի փունկցիաների կարգավորման նորմալ մեխանիզմները:

Ցածր մթնոլորտային ճնշման պայմաններում նորածին կեն-

գանիների ակլիմատիզացիան չի բարձրացնում նրանց ռադիոռեզիստենտականությունը։ Հեղինակները այստեղից կատարում են նախնական եզրակացություն, այն, որ նշված երևույթի մեխանիզմում որոշակի դերը պատկանում է ոչ միայն անաէրոր օքսիզացման պրոցեսների ուժեղացմանը, այլև ֆունկցիաների կորտիկալիզացիային (կեղևացմանը)՝ կախված հասակային տարրեր շըրջաններից։

Երկարատև հետազոտությունները ամբիոնի աշխատակիցներին հիմք են տվել եղրակացնելու, որ կենդանիների ռադիոռեզիստենությունը օրվա ընթացքում կայում չէ։ Հաստատվել է, որ առնետները, մկները և հավերը ուշ երեկոյան ու գիշերը ավելի ռադիոռեզիստենություն են, քան առավոտյան ժամերին։

Օրվա ընթացքում օրգանիզմի ռադիոռեզիստենության տատանման մեխանիզմները պարզաբանելու նպատակով, ուսումնասիրվել են կենսաբանական ֆունկցիաների ռիթմի վիճակը (շարժումնակությունը, մարմնի շերմաստիճանը, պուլսը, շնչառությունը, արյան մորֆոլոգիական և բիոքիմիական կազմը, սիրտ-անոթային սիստեմը և այլն), ինչպես նաև այս ֆունկցիաների ռեակտիվության տատանումները՝ օրվա տարրեր ժամերին, բացահայտվել է որոշակի սերտ կապ կենդանիների ռադիոռեզիստենության և օրվա ընթացքում ֆիզիոլոգիական ֆունկցիաների ակտիվության տատանումների միջև։ Հեղինակները հուսով են, որ փոփոխելով միջավայրի պայմանները՝ ֆոտոպերիոդիկան, կերակրման ժամանակը և այլն, հնարավոր կլինի նպատակասլաց կերպով փոխել նյութափոխանակության պրոցեսներն ու ֆիզիոլոգիական ֆունկցիաները և դրանով իսկ ազդել կենդանիների ռադիոռեզիստենության վրա՝ օրվա տարրեր ժամերին։

Նկատի ունենալով ճառագայթային վնասվածքների բուժման նպատակով ոսկրածուծի լայն կիրառումը և դրա հետ կապված հետագայում դոնորության հարցի մեծացումը (ոսկրածուծ վերցնելու համար), ամբիոնի աշխատակիցները էքսպերիմենտում ուսումնասիրել են արյան մորֆոլոգիական կազմի և արյունաստեղծապարտի խանգարման և վերականգնման պատկերը դոնորների մոտ՝ նրանցից ոսկրածուծ վերցնելուց հետո։ Միաժամանակ հետազոտվել են արյունաստեղծապարտի վերականգնման պրոցեսները խթանող մի շարք միջոցներ։ Այս ուղղությամբ աշխատակիցների կողմից ստացվել են նախնական հավաստի տվյալներ։ Հետազոտությունները գեռևս շարում ակվում են։

Հուրջ աշխատանքներ են կատարվել նաև շաբարախափի և ճառագութային հրվասդության շառացզված ընթացքի առանձնահատկությունների ուսումնասիրության ուղղությամբ:

Այս տարիների ընթացքում ամբիոնի աշխատակիցների կողմէց ուղղուկնսաբանության գծով հրատարակվել են ավելի քան 100 գիտական աշխատանք, պաշտպանվել են 4 թեկնածուական դիսերտացիա, ներկայացված են տպագրության 2 մոնոգրաֆիա: Նշված պրոբլեմի շուրջը կազմակերպված տարբեր գիտաժողովներում (նույն թվում և արտասահմանում) արվել է ավելի քան 50 գիտական հաղորդում:

Ստացված տվյալները կարենու նաշնակություն ունեն նաև տիեզերագնացների մարմնի կոփման, նրանց ուղիստենտականության բարձրացման համար:

Ամբիոնի աշխատանքը կոռորդինացվում է բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրով գիտա-տեխնիկական սովետի հետ:

Ռադիոկնսաբանական բնութիւնի հետազոտություններ են կատարվում նաև Երևանի համալսարանի կենսաբանական ֆակուլտետի այլ ամբիոններում: Այսպես, բուսաբանության ամբիոնի դոցենտ Հ. Հ. Տոնականյանը ուսումնասիրել է ունտգենյան ճառագայթների և ուլտրաձայնի ազդեցությունը՝ բույսերի աճման ու զարգացման վրա: Ի մի բերելով իր հնագամյա փորձերի արդյունքները, հեղինակը եղրակացնում է, որ ունտգենյան ճառագայթների որոշակի դողաներ (125 ո—2100 ո) խթանում են բույսերի աճն ու զարգացումը, բարձրացնում կուտարական բույսերի բերքատվությունը (կարտոֆիլ, շաբարի ճակնդեղ, եղիպատացորեն, դդմիկ, ամսարողկ): Նրան հաջողվել է ապացուցել, որ ունտգեն-ճառագայթների միջոցով հնարավոր է նաև փոփոխել՝ կրճատել կամ ձգձգել բույսերի վեգետացիոն ժամանակամիջոցը: Ստացված տվյալներից հեղինակը հանգում է գործնական եղրակացության, որ ունտգեն ճառագայթահարումը կարելի է դիտել իբրև բույսերի նախացանքային ագրո-միջոցառում:

Ուշադրության են արժանի նաև համալսարանի գենետիկայի ամբիոնի դոցենտ Ն. Պ. Բեգլարյանի հետազոտությունները: Նա ուսումնասիրել է ունտգենյան ճառագայթների և գիբերելինի մուտացեն ազդեցությունը Campositae, papaveraceae, Convolvulaceae ընտանիքների մի շաբաթ ներկայացուցիչների վրա:

Նշված ընտանիքների վրա ոճնտգենյան ճառագայթների (250 ո—3000 ո) և գիբերելինի տարրեր կոնցենտրացիաների ազդեցությամբ հեղինակին հաջողվել է ստանալ մուտանտ կայուն ձևեր, որոնց մասին են վկայում մորֆոլոգիական, բիոբիմիական անալիզների արդյունքները։ Հեղինակը այդ բույսերի մոտ նկատել է բջիջների և հերձանցքների չափերի, հերձանցքները ծածկող մազիկների փոփոխություն, յուղի տոկոսայնության բարձրացում (արևածաղկի), միտոզի ակտիվացում, կորիզների ավելացում, ուժեղ վակուոլիզացիա և այլն։ Հեղինակը գտնում է, որ բոլոր ստացված մուտանտները հարուստ նյութ են սելեկցիոն նպատակների համար։

Մյուս ուադիոկենսաբանական օջախը, որը առաջինն է իր հզորությամբ, հանդիսանում է ուադիոկենսաբանության սեկտորը՝ Վերջինս կազմակերպվել է Հայկ. ՍՍՀ ԳԱ կազմում 1958 թ.: Սեկտորը արագ անցնելով կազմակերպական շրջանը, համալրվեց կադրերով, ձեռք բերեց անհրաժեշտ սարքավորում և անցավ ուղղության ժամանակակից կարեռը հարցերի լուծմանը։

Կազմակերպման օրից առ այսօր սեկտորի ուսումնասիրության հիմնական խնդիրները եղել են ճառագայթային վնասվածքների ընդհանուր օրինաշափությունների և ազդեցության մեխանիզմների սահմանումն ու պրոֆիլակտիկայի և բուժման որոշ հարցերի լուծումը։

Այսպես, հետազոտողների մի խումբ Ս. Ա. Պապյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է ճառագայթահարման փոքր դոզաների ազդեցությունը կանցերոգենեկի վրա։ Սպիտակ մկների և առնետների վրա կատարված փորձերը ցույց են տվել, որ ոճնտգենյան ճառագայթների ամենօրյա փոքր դոզաների (1 ո) և կանցերոգեն (ուռուցքածին) նյութերի համատեղ կիրառումը ուշացնում է ուռուցքների առաջացման ժամկետը, բայց վերջիններիս ի հայտ գալուց հետո նրանց աճը ընթանում է խիստ ինտենսիվ և արագ հանգեցնում կենդանիների մահվան։

Կ. Ա. Քյանդարյանը, որը մինչև 1962 թ. գլխավորել է հաստատությունը, մի խումբ աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրել է մարդկանց պրոֆեսիոնալ խրոնիկ ճառագայթային հիվանդությունը։ Այս առումով հետազոտվել են հիվանդի և սպասարկող անձնակազմի կենսաբանական անվտանգության մի քանի հարցեր՝ ոճնտգեն-ուադիոլոգիական հետազոտությունների և ուղիորդման ժամանակ։ 70 հետազոտված անձերից 17-ի մոտ հայտնաբերվել են խրանիկ ճառագայթային հիվանդության ախտա-

նշաններ և ձեռք են առնվել համապատասխան բուժիչ միջոցներ, Գիտական արժեքին զուգընթաց այս աշխատանքը ունի նաև կարե- վոր դրծնական նշանակություն:

Էլեկտրաֆիզիոգների խումբը Ռ. Կ. Հարությունյանի ղեկա- վարությամբ հետևողականորեն ուսումնասիրել է ներվային սիս- տեմի լարիլության (ֆունկցիոնալ շարժունակության) և ուսակտի- ժամանակի:

Ուսումնասիրվել է նաև ունտգենյան ճառագայթների ազդե- ցությունը կենդանիների վրա՝ վերջիններիս կենտրոնական ներվա- յին համակարգության փոփոխված ֆունկցիոնալ վիճակի պայման- ներում: Կենտրոնական ներվային համակարգության ֆունկցիոնալ վիճակը որպես փոփոխող գործոն օգտագործվել է հաստատուն հո- սանքը:

Հետազոտությունների արդյունքները ի հայտ են բերել գլխու- ղեղի անողիկ գրգուման ուղղուաշտպանական և հակառակուցքային ազդեցությունը: Պետք է նշել, որ հակառակուցքային ազդեցությու- նը ի հայտ է գալիս միայն անողիկ գրգուման և ճառագայթահար- ման միաժամանակյա ազդեցության պայմաններում:

Հեմատոլոգների խումբը, Ե. Ա. Պարեյշվիլու և Ռ. Հ. Հարու- թյունյանի ղեկավարությամբ, ուսումնասիրել է արյան և արյունա- ստեղծ օրգանների փոփոխությունները ճառագայթային վիճակածք- ների ժամանակ: Մորֆոլոգները (է. Ե. Պուշտովա և ուրիշներ) հիստորիմիական նուրբ մեթոդների կիրառմամբ, ուսումնասիրել են այս պայմաններում արյունաստեղծ օրգանների կառուցվածքա- յին փոփոխությունները:

Մի քանի տարի է, ինչ շարունակվում են հետազոտություննե- րը ճառագայթային վիճակածքների ժամանակ արյան սիստեմում նյութափոխանակության պրոցեսների ուսումնասիրության ուղղու- թյամբ: Ներկա ժամանակում այդ հետազոտությունները համալրո- վում են արյունաստեղծման կենսաբանական խթանման եղանակ- ների հայտնագործմամբ (Ե. Ա. Պարեյշվիլի, է. Ե. Օհանջանյան, Յու. Բ. Խելքեց): Այս բնագավառում ծավալուն և ուշագրավ հետա- զոտություն է կատարվել նաև Ռ. Հ. Հարությունյանի կողմից: Նա 5—6 տարվա ընթացքում ուսումնասիրել է ճառագայթահարված կենդանիների հեմոպոետինների (արյան խթանիչների) վիճակը:

Մի շարք հետազոտություններ նվիրված են եղել ճառագայթա- հարված կենդանիների օրգանիզմում իմունոկենսաբանական տե-

դաշտերին (Լ. Ա. Քամալյան, Ռ. Ա. Տեր-Պողոսյան, Է. Դ. Ստեփանյան և այլն):

Վերջապես, ճառագայթահարված կենդանիների էնդոկրին սիստեմի ֆունկցիոնալ և գրահետ կապված նյութափոխանակության պրոցեսների ընթացքը ուսումնասիրվել են Ս. Պ. Վլասենկոյի և Գ. Ա. Ղազարյանի կողմից՝ իզոտոպային մեթոդի օգնությամբ:

1960 թվականից սկսած մի խումբ հետազոտողներ (Ս. Պ. Վլասենկո, Հ. Խաչավակյան, Է. Շահնազարյան) զբաղվել են բիոէներգետիկ պրոցեսների հետուադիացիոն խանգարումները և նշված պրոցեսները նորմալացնող միջոցների հայտնաբերման ուսումնասիրությամբ:

Այս առումով հատուկ ուշադրություն է նվիրվել հիպոֆիզ-մակերիկամային սիստեմի նշանակությանը:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ բիոէներգետիկ խանգարումների խորությունը սերտորեն կապված է հիվանդության ծանրության աստիճանից: Նշված խանգարված ֆունկցիայի նորմալացումը ապահովում է ենթափորձային կենդանիների կյանքի տևողության և ապրելունակության բարձրացումը:

Ճառագայթային վնասվածքների ժամանակ հիալուրոնաթթու-հիալուրոնիդաղաղ սիստեմի գնրի ուսումնասիրությամբ զբաղվել են Մ. Ի. Արավերդյանը և Ֆ. Օ. Հայրապետյանը:

Այժմ տարվում են նաև գենետիկական բնույթի աշխատանքներ: Հատուկ մեթոդով ուսումնասիրվում են նորածին երեխաների սոմատիկ բջիջների խրոմատինային նյութի փոփոխությունները՝ նպատակ ունենալով պարզել երկրի տարրեր աշխարհագրական շրջաններում գոյություն ունեցող ռադիացիոն ֆոնների (մակարդակների) տարրերության հետևանքով ծագող գենետիկական փոփոխությունները:

Ներկա ժամանակում սեկտորի աշխատակիցների կողմից տարվում են նաև բազմաթիվ աշխատանքներ հողի, սննդամթերքի, մարդկանց և գյուղատնտեսական կենդանիների հովածքների ու օրգանների ռադիոակտիվության հետազոտման ուղղությամբ: Ռադիոմետրիկ և ռադիոքիմիական մեթոդներով որոշվել է Հայաստանի մի շարք աշխարհագրական շրջաններում ստացվող կաթի և պանրի մեջ ռադիոակտիվ ստրոնցիումի, իտրիումի և ցելիումի պարունակությունը:

Կատարված աշխատանքները հանրագումարի են բերվել ռադիոիոդիայի սեկտորի կողմից կազմակերպված 2 գիտական կոնֆերանսներում և 1960 թ. լույս տեսած գիտական աշխատու-

թյումների՝ «Ռազիկնենսաբանության հարցերը» ժողովածուի 1-ին հատորում. վերջինս ընդգրկում է իր մեջ 30 անուն հոդված: Նույն տարին սեկտորին շնորհվել է առաջին կարգ, իսկ մի շարք գիտական թեմաներ մտել են ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության դարձան համամիութենական պլանի մեջ:

1961 թ. սեկտորի աշատակիցների կողմից շարունակվել է սուր և խրոնիկ ճառագայթային հիվանդության կոմպլեքս ուսումնասիրությունը: Ռազիկուակտիվ յոդի օգնությամբ հետազոտվել են վահանաձև զեղծի ֆունկցիոնալ խանգարումները, նորածին երեխաների և կենդանիների ուսկրների ռազիկուակտիվությունը: Գլխուղեղի կեղեկ և ենթակեղեային կենտրոնների մեջ ներդրած էլեկտրոդների օգնությամբ ուսումնասիրվել են ճառագայթահարված կենդանիների տեսողական անալիզատորի տարրեր օղակների լաբորատուրանը, հետձառագայթային կոմպենսատոր պրոցեսները ուղեղիկի մասնակի և լրիվ վնասման դեպքում:

Սեկտորի մի շարք լաբորատորիաներում սկսել են ներդրվել հետազոտության նոր մեթոդներ, որոնք Հայաստանի սահմաններում առաջինն են: Օրինակ, տրոմբոցիտների էլեկտրամիկրոսկոպիական, վիրուսոլոգիական և այլ մեթոդներ: Հետազո՞ղ զարգացում են ստանում ճառագայթային վնասվածքների ժամանակ ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի փոխանակության, մորֆոլոգիական և հիստոքիմիական, գլիկոգենի, ձարպերի և մի շարք ֆերմենտների ուսումնասիրությունները:

1961 թվականին լույս է տեսնում «Ռազիկնենսաբանության հարցերը» ժողովածուի երկրորդ հատորը (28 հոդված):

1962 թ. ռազիկուուգիայի սեկտորը (Վարիչ Ս. Ա. Պապոյան) Հայկ. ՍՍՀ ԳԱ-ից հանձնվում է ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիային, իսկ գիտական թեման կոռորդինացվում է ՍՍՀՄ առողջապահության մինիստրության համապատասխան օրգանների կողմից:

1963 թ. ռազիկնենսաբանության սեկտորը կազմակերպում է գիտական կոնֆերանս, նույն թվականին լույս են տեսնում «Ռազիկնենսաբանության հարցերը» ժողովածուի 3-րդ և 4-րդ հատորները՝ 47 գիտական հոդվածներով:

Սեկտորի աշխատակիցների կողմից վերջին տարիներին ռազիկնենսաբանության գծով պաշտպանվել են մի շարք թեկնածուական դիսերտացիաներ (Վ. Գ. Ղազարյան, Վ. Գ. Մանուսաջյան, Ա. Ա. Լալայան, Ա. Ա. Միրզոյան, Ա. Գ. Շահոյան, Յ. Օ. Հայրապետյան, Յու. Խ. Խելքեց և ուրիշներ):

1965 թ. ռազիկնենսաբանության գծով դոկտորական դիսեր-

տացիաներ են պաշտպանում Ռ. Կ. Հարությունյանը և Ռ. Հ. Հարությունյանը:

Այս տարիների ընթացքում ուղղուկենսաբանության սեկտորի աշխատակիցների կողմից տարբեր հանդեսներում և ժողովածուներում տպագրվել են ավելի քան 200 գիտական աշխատանք: Գիտական զեկուցումներով համագումարներում և կոնֆերանսներում հանդես են եկել ավելի քան 50 հոգի:

1965 թ. լուս է տեսել «Մադիոկենսաբանության հարցերը» ժողովածուի 5-րդ հատորը:

Ներկա ժամանակում սեկտորը ունի ավելի քան 120 գիտաշխատող՝ 6 գիտության դոկտոր և ավելի քան 20 գիտության թեկնածու: Այս առումով գիտական այս օշախը կարելի է համարել հանրապետության առաջնակարգ հաստատություններից մեկը:

Մի շարք գիտահետազոտական հաստատությունների (Երևանի ունտագին-ուղղուղղոգիայի և օնկոլոգիայի, Լենինգրադի ուղղոգիային բաժինների, Պավլովի անվան բարձրագույն ներվային գործունեության, ՍՍՀՄ առողջապահության մինիստրության բիոֆիզիկայի և այլ ինստիտուտներ) հետ ունեցած սերտ գիտական կապերը, օնկոլոգիայի, ուղղուկենսաբանության և ատոմային պաշտպանության բնագավառում կատարված ուսումնասիրությունների լայն մասսայականացումը ուղղությունների սեկտորին հասցըն լայն ճանաշման:

Վերջին տարիներին ուղղուկենսաբանության ասպարեզում նշանակալի հաջողությունների են հասել նաև Երևանի բժշկական ինստիտուտի աշխատակիցները (ընդհանուր հիգիենայի, քիմիայի և բիոքիմիայի ամբիոններ): Այստեղ կատարվում են սիստեմատիկ ուսումնասիրություններ՝ արտաքին միջավայրի առարկաների բնական ուղղուակտիվության որոշման բնագավառում: Հետազոտվել են Հայաստանի շատ շրջանների հողի և բուսական ծածկի, 32 տեսակի շինանյութերի և մի քանի սննդամթերքների (բանջարեղեն, մրգեր, հատապտուղներ, կաթ և այլն) բնական ուղղուակտիվությունը:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրված շրջանների հողի և բուսական ծածկի ուղղուակտիվությունը գտնվում է թույլատրելի դոզայի սահմաններում:

Համեմատաբար մեծ ակտիվություն ունի Սևանի, Ապարանի և Հրազդանի շրջանների բուսական ծածկը: Կանաչեղենի որոշ տեսակների ուղղուակտիվությունը ավելի բարձր է, քան բանջարեղենինը: Համեմատաբար մեծ ակտիվություն ունեն սամիթը, կորթի-

նը, համեմը, մաղղանոսը, Սակայն հետազոտված սննդամթերքների ընդհանուր ռադիոակտիվության մակարդակը չի գերազանցում թույլատրվող նորմաներին:

Կատարված հետազոտությունների բազմակողմանիության տեսակետից ավելի ուշագրավ են ընդհանուր հիգիենայի ամբիոնի աշխատանքները:

1958 թ. սկսած այս ամբիոնի, իսկ 1962 թ. նաև նրան կից կազմակերպված ուղղացիոն հիգիենայի գիտահետազոտական լաբորատորիայի աշխատակիցները (Լ. Բ. Հարությունյան, Լ. Ե. Մկրտչյան, Ա. Ա. Պետրոսյան, Մ. Ե. Գրբրիելյան, Լ. Ա. Օլարակյան) Լ. Բ. Հարությունյանի ղեկավարությամբ հետազոտել են Հայաստանում ճառագայթման բնական ֆոնը, Վերոհիշյալ հարցի ուսումնասիրության անհրաժեշտությունը բխում է նրանից, որ Հայաստանը լինելով լեռնային երկիր, ստանում է տիեզերական ճառագայթների համեմատաբար բարձր դոզա: Միաժամանակ հանրապետությունը հարուստ է բնական ռադիոակտիվ իզոտոպներ (Ra-226, Th-232, K-40) պարունակող հրաբխային բնույթի կոչտ մարմիններով:

Կատարված աշխատանքները թույլ են տվել ճշտել հանրապետության ռադիոացիոն քարտեղը և որոշել Հայաստանի տարբեր շրջանների բնակչության ռադիոացիոն ծանրաբեռնվածությունը:

Միաժամանակ հետազոտվել են արտաքին միջավայրի առարկաներում և մարդու օրգանիզմում արհեստական բեկորային ռադիունուկլիումիությունը՝ Sr-90, Cs-137, Ce-144:

Բացի դրանից, փորձնական պայմաններում ուսումնասիրվել են տարբեր ճանապարհներով օրգանիզմ ներթափանցած Ce-144 իզոտոպի կենսաբանական ազդեցության և փոխանակության յուրահատկությունները: Մարդու օրգանիզմում և սննդամթերքների մեջ տրոհման ենթակա նյութերի քանակական որոշումը հնարավորություն տվեց զնահատելու այն ռադիոացիոն վտանգը, որը պայմանավորված է մարդու օրգանիզմի մեջ ռադիոակտիվ նստվածքների ներթափանցմամբ: Հետազոտության արդյունքները հրատարակվել են Երևանի բժշկական ինստիտուտի 43-րդ գիտական սեմիայի նյութերում:

Հատուկ մաթեմատիկական մոդելների օգնությամբ Ce-144 իզոտոպի կենսաբանական ազդեցության ուսումնասիրության վերաբերյալ կատարված աշխատանքները Խ. Վ. Գրիգորյանը ներ-

կայացրել է որպես թեկնածուական դիսերտացիա՝ «Տարբեր ճանապարհներով օրգանիզմ ներթափանցած Ce-144-ի փոխանակությունը և կենսաբանական ազդեցության մի քանի կողմերը» թեմայով և պաշտպանել 1966 թ.:

Մի շարք հետազոտություններ նվիրված են մարդու օրգանիզմում CS-137-ի տեղաբաշխմանը և փոխանակությանը: Բացահայտված են մարդու օրգանիզմում CS-137-ի քանակությունը՝ կախված հետազոտվողի տարիքից և սեռից, ինչպես նաև որոշ ցուցանիշներ, որոնք բնորոշում են այդ ուաղինուուկիդի փոխանակությունը տաքարյուն կենդանիների օրգանիզմում:

1966 թվականից սկսած ամբիոնում հետազոտվում է նաև կենսաբանական էֆեկտի կախվածությունը հյուսվածքային դոզայի ձևավորման արագությունից: Որպես ճառագայթային վնասվածքների ծանրությունը բնորոշող ցուցանիշներ ուսումնասիրվել են սպիտակուցային, աղոտային և էներգետիկ փոխանակության խանգարումները, ինչպես նաև լրարդի միտոքոնդրիաներում ֆուսֆորացման պրոցեսները:

Այսպիսով, ամբիոնում տարվող աշխատանքները հիմնականում լուծում են ճառագայթային վնասվածքների ախտաբանության և վերականգնման պրոցեսների մի քանի արմատական հարցեր: Նման ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռության կատարելու գործնական առաջարկություններ՝ ատոմային արդյունաբերության վթարների վնասակար ազդեցությունները կանխելու ուղղությամբ, ինչպես նաև որոշելու խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի կիրառման պայմաններում բուժժառայության անվտանգության մի քանի կողմերը:

Ինչպես հայտնի է, ներկայում հարց է հարուցված Հայաստանում Սևանի ափերին կառուցելու բազմաթիվ հանգստյան տներ և պիոներական ճամբարներ: Այս կապակցությամբ քիմիայի ամբիոնի աշխատակիցների առջև խնդիր է դրվել պարզել այդ շրջանի մթնոլորտի իոնացնող վիճակը: Հետազոտության՝ արդյունքները ցույց են տվել, որ Սևանի շրջանում իոնացնող գործուները մի փոքր ավելի ինտենսիվ են՝ կախված տվյալ տեղակայքի աշխարհագրական և երկրաբանական առանձնահատկություններից: Սակայն նրանք դուրս չեն գալիս նորմայի սահմաններից:

Վերջին տարիներին ուաղինկենսաբանության հարցերով զբաղվում են նաև ՀՍՍՀ ԳԱ Լ. Ա. Օբելու անվան ֆիզիոլոգիայի, անասնաբուժական-անասնաբուժական և այլ ինստիտուտներում:

Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի ախտա-

բանական ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ամ-  
րիոնում (Մ. Ս. Գրիգորյան) վրաղվում են ճառագայթային վնաս-  
վածքների ժամանակ ցավային էֆեկտների ուսումնասիրությամբ:  
Հիմնականում հետազոտվել են արյան մի քանի բիոքիմիական  
ցուցանիշները, ոետիկուլո-էնդրոթելային և հիստամին-հիստամի-  
նազար սիստեմները, սպիտակուցային նյութերի սուլֆհիդրիլ խըմ-  
բերը և այլն:

Ուաղիոկենսաբանական աշխատանքներ կատարվում են նաև  
Հայկ. ՍՍՀ ԳԱ բիոքիմիկայի լաբորատորիայում, Հ. Գ. Դեմիրչող-  
լյանի ղեկավարությամբ: Այնտեղ հիմնականում ուսումնասիրվում  
է փոնացնող ճառագայթների ազդեցությունը տեսողական անալի-  
դասորի վրա, նպատակ ունենալով պարզաբանել աշքի փոտոռե-  
ցեպցիայի մեխանիզմները:

Ուաղիոկենսաբանության գինետիկական հարցերը Հայաստա-  
նում մշակվում են ուղղացիոն գինետիկայի լաբորատորիայի աշ-  
խատակիցների կողմից Վ. Ռ. Գուլքանյանի, Վ. Օ. Բաբյանի և  
Վ. Ա. Ավագյանի ղեկավարությամբ: Ի տարբերություն մյուս ու-  
ղիոկենսաբանական հաստատությունների, այս լաբորատորիայի  
ուսումնասիրության օբյեկտ հիմնականում հանդիսանում են բույ-  
սերը:

\* \* \*

Մի քանի խոսք Հայաստանում ուղղիոկենսաբանության դար-  
դացման հեռանկարների մասին:

Հայաստանում 1951 թվականից սկսած տարբեր մինիստրու-  
թյունների և գերատեսչությունների բազայի վրա ստեղծվել են  
միմյանցից մեկուսացած մի քանի ուղղիոկենսաբանական հաստա-  
տություններ: Կադրերի և միջոցների մասնատումը, բնականաբար,  
ունեցել է բացասական ազդեցություն ուղղիոկենսաբանական հե-  
տազոտությունների հետազա ծավալման գործում: Միաժամանակ  
մասնատվածությունը հնարավորություն չի տվել կոորդինացնելու  
նրանց աշխատանքները և լաբորատորիաները դինելու անհրաժեշտ  
սարքավորումներով:

Սակայն վերջին տարիներին միջոցներ են ձեռք առնելու նշված  
կազմակերպչական թերությունները վերացնելու ուղղությամբ:

Որոշում է ընդունված հանրապետության մասնատված ու-  
ղիոկենսաբանական հաստատությունները միավորելու և ուղղիոկեն-  
սաբանության սեկտորը կլինիկական և էքսպերիմենտալ ուղղիոկեն-  
սաբանության ինստիտուտի վերակազմելու մասին:

*Այսպիսով, հանրապետությունում բարելավվում են պայմանները ուղղուկենսաբանության գծով գիտահետազոտական աշխատանքների հետագա լայն ծավալման համար:*

С. А. АКОПЯН, С. М. МИНАСЯН

## РАЗВИТИЕ И ЗАДАЧИ РАДИОБИОЛОГИИ В АРМЕНИИ (1927—1967)

### Резюме

Успешное применение атомной энергии и радиоактивных веществ во всех отраслях науки и техники, ядерные испытания и в связи с этим значительное увеличение числа людей, подвергающихся опасности быть облученными, вызывает необходимость всестороннего изучения биологического действия ионизирующих излучений на людей, животных и растительные организмы.

Актуальность поставленного вопроса привлекла внимание широкого круга исследователей, в том числе и ученых Армении.

Работы по радиобиологии в Армении ведутся с 1927 года. Первые исследования проводились на базе рентгено-радиологического отделения 1-й клинической больницы и кафедры Ереванского медицинского института (директор В. А. Фарнаджян). Эти исследования ограничивались изучением влияния рентгеновских лучей на людей, профессионально связанных с эксплуатацией рентгенаппаратов. Изучалось также влияние облучения на морфо-функциональную природу половых желез (Г. М. Сагателян).

В 1946 г. в Ереване был создан Научно-исследовательский институт рентгенологии и онкологии Минздрава республики, а при нем—лаборатория рентгенофизиологии, в которой изучалось влияние лучей радия на вегетативные центры (таламус) животных (Г. П. Мушегян).

Затем при институте организовалась экспериментально-биологическая лаборатория, переименованная в 1954 году в радиобиологическую лабораторию. Тем самым в Армении впервые был создан специальный очаг радиобиологической науки.

Коллектив лаборатории под руководством М. А. Мовсесяна в течение последних 10 лет разрабатывал проблему: «Комбинированное влияние на организм ионизирующей радиации и кровопотери». За эти годы сотрудниками опубликовано свыше 100 работ, в том числе и учебное пособие «Радиобиология» (на армянском языке).

В 1955 г. при кафедре физиологии человека и животных Ереванского госуниверситета был создан второй очаг радиобиологии.

Основным научным направлением кафедры явилось изучение особенностей нарушения и восстановления физиологических функций облученного организма. Изучая биологическое действие рентгеновских лучей на животные организмы, сотрудники кафедры под руководством С. А. Акопяна установили интересные факты об изменениях физиологических функций (секреторно-экскреторная деятельность пищеварительного тракта, функциональное состояние некоторых регуляторных механизмов дыхания, возбудимость нервно-мышечного аппарата и ЭКГ при частичной и полной анемии ЦНС, характер суточного колебания некоторых физиологических функций и радиочувствительность животных и т. д.). Одновременно изучались радиочувствительность гомойотермных и пойкилотермных животных, характер изменения чувствительности при предварительной адаптации в условиях высокой и низкой температур окружающей среды.

В настоящее время проводятся исследования по изучению высотной акклиматизации на горе Арагац, на радиоустойчивость животных. За эти годы сотрудниками кафедры опубликовано свыше 100 научных работ и подготовлены две монографии.

Третьим по счету, но наиболее мощным радиобиологическим очагом является Сектор радиобиологии АН Арм. ССР, созданный в 1958 г. по инициативе В. А. Фанардяна. Основная задача сектора—изучение общих закономерностей, механизма действия, лечение и профилактика лучевых поражений. В этой связи отметим коллективную работу (С. А. Папоян, К. А. Кяндарян и сотрудники) по изучению клинической картины профессиональной хронической лучевой болезни. Несколько лет продолжаются работы по изучению обменных процессов в системе крови при острой лучевой болезни, изыскиваются способы биологической стимуляции гемопоэза. Заслуживает упоминания оригинальное исследование Р. А. Арутюняна, посвященное изучению гемопоэтизма у облученных животных.

Электрофизиологи изучали действие рентгеновских лучей на организм животных (при измененном функциональном состоянии ЦНС). Изучены изменения функций эндокринной системы и обменных процессов, роль ферментотканевой системы гиалуронидаза—гиалуроновая кислота в патогенезе лучевого синдрома.

Сотрудники Сектора радиобиологии опубликовали более 200 научных работ.

В настоящее время Сектор имеет свыше 120 сотрудников, в том числе 6 докторов и 20 кандидатов наук.

Значительных успехов в области радиобиологии достигли сотрудники Ереванского медицинского института (кафедры общей гигиены, химии и биохимии). Кафедрой общей гигиены под руководством Л. Г. Арутюняна выполнена работа по определению естественной радиоактивности почвы и растительного покрова большинства районов Армении.

В последние годы радиобиологическими вопросами занимаются в Институте физиологии АН Арм. ССР, Зоотехническо-ветеринарном институте, лабораториях биофизики и радиационной генетики АН Арм. ССР и т. д.

Таким образом, в Армении на базе разных министерств начиная с 1951 г. было создано несколько радиобиологических учреждений, работавших изолированно друг от друга. В настоящее время улучшается база и условия для дальнейшего развертывания научно-исследовательской деятельности в этой области. В частности, предстоит реорганизация Сектора радиобиологии в Институт клинической и экспериментальной радиобиологии.

Важнейшей задачей является координация радиобиологических исследований, проводимых в закавказских республиках.